

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

20.03.2019թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դավթյանը,
Ն.Բաղդասարյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,
ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,
ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ.Տիտիզյանը,
ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի
առաջատար մասնագետ Ն.Մանդալյանը,
ՀՀ ՎԿ մարդահամարի վարչության պետ Վ.Գևորգյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. ««Կազմակերպությունների հաշվարկի վիճակի վերաբերյալ» Ձև 6-Ֆ (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 08-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիտիզյան/

Որոշեցին՝

Հաստատել «Կազմակերպության հաշվարկների վիճակի վերաբերյալ» Ձև 6-Ֆ (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ««Կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» Ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հունվարի 25-ի թիվ 07-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 08-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

2. ««Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման հանրագումարները» ՁԵՎ 6-ԳՏՀ (տարեկան), «Գյուղական վայրերի բնակչության գյուղատնտեսական կենդանիներով ապահովվածությունը» ձեվ 9-ԳՀ (տարեկան), «Մուշտակամորթ գազանաբուծության դրության մասին» Ձև 26-ԳՏ (տարեկան), «Գարնանացանի ընթացքը» Ձև 3-ԳՏ (տարին երեք անգամ, ամսական), «Գարնանացանի ընթացքը» Ձև 3-ԳՏՀ (տարին երեք անգամ, ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 24-Ն, թիվ 25-Ն, 2002 թվականի օգոստոսի 9-ի թիվ 122-ն, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 46-ն և թիվ 47-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 70-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում՝ Իտալիայի Թուրին քաղաքում 2019 թվականի հունվարի 28-ից 31-ը Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Միջազգային ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված «Երեխայի արգելված համարվող աշխատանքի (այսուհետ՝ ԵԱԱ) և հարկադիր աշխատանքի վերաբերյալ տվյալների վերլուծության ազգային կարողությունների ստեղծում» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

3.2. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2019 թվականի փետրվարի 5-ից 8-ը «Միջազգային միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքման և օգտագործման կատարելագործումը Կայուն զարգացման նպատակների 2030 օրակարգի (ԿՁՆ 2030) համատեքստում» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Քայանթարյան/

3.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2019 թվականի փետրվարի 20-ից 21-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից կազմակերպված «Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգի (ԲՏՀՀ) ներդրում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն.Մանդայան/

3.4. «Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2019 թվականի մարտի 5-ից 6-ը Եվրոպական հարևանության երկրներում բնապահպանական բաց տվյալների (Open Data) և էլեկտրոնային կառավարման (e-government) օգտագործման վերաբերյալ տարածաշրջանային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան, Ն. Մանդայան/

3.5. «Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2019 թվականի մարտի 5-ից 8-ը ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 50-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ»:

/Զեկուցողներ՝ Ս.Մասցականյան, Ա.Սաֆյան/

3.6. «Հաղորդում՝ Ֆինլանդիայի Հելսինկի քաղաքում 2019 թվականի մարտի 13-ից 15-ը Ֆինլանդիայի վիճակագրության գրասենյակի կողմից կազմակերպված «Եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրում և փոխանակում» խորագրով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մասցականյան, Ա.Սաֆյան, Ա.Հայրապետյան, Վ.Գևորգյան, Գ.Մելիքսեթյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

30.04.2019թ. նիստին

Մասնակցում էին՝

- ՀՀ ՎՊԻ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԻ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն. Բաղդասարյանը, Վ.Դավթյանը, Լ.Պետրոսյանը,
- ՀՀ ՎՊԻ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ս.Մելքումյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Պետրոսյան/

Որոշեցին՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

/Անհաստատել/